Արձանագրություն N 3
ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/10 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 սեպտեմբերի 2022թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Ադելա Մկրտչյանը, Ալբինա Տերտերյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Սահմանված ժամկետում «Հայկարլի» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով՝ համակարգով հանձնաժողովին չի ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակները:

2. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, քննարկման արդյունքում որոշեց.
ա/ «Հայկարլի» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել հայտը ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/10 ծածկագրով հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն:
բ/ էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

3. Ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
ա/ «Յասոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 6-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների համար:
Ընտրված մասնակից է ճանաչվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

4. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին 6-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների համար պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված պայմաններով՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ս. Մաթևոսյան

անդամներ՝ _____ Ա. Մկրտչյան

_____ Ա. Տերտերյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան